ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

25 ՀՈՒՆՎԱՐ 2022 թ.
№ 1 (1080)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանը տարեվերջն ամփոփում է նաև բուհի համար ավանդական դարձած «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությամբ: ՀՊՄՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ արդեն մեկ տասնամյակից ավելի անցկացվող մրցանակաբաշխությունը ի հայտ է բերում ուսման, գիտական և հասարակական գործունեության մեջ աչքի ընկած լավագույններին: Նախ մրցութային պայքար է ծավալվում ֆակուլտետներում, որից հետո նրանցից ընտրվում է համալսարանի լավագույն ուսանողը:

Մրցույթը ուսանողների համար սպասված իրադարձություն է, իրենց գործունեությունն ու աշխատանքն արժևորելու հնարավորություն, որը ոչ միայն հաճելի ու դրական զգացողություններ, այլև առաջ շարժվելու, ոգևորվելու ուժ է հաղորդում:

Մրցանակաբաշխությունն սկսված է: Ելույթ են ունենում Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի մանկավարժության բաժնի ուսանողները՝ ներկայացնելով ազգագրական պարերի շարք:

Ուսանողներին, պրոֆեսորադասախոսական կազմին, ներկաներին շնորհավորում է համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը՝ փաստելով՝ լավագույն ավանդույթները մեզանում պահպանվում են և շարունակվելու են. «Լավագույններից լավագույնը «Լավագույն ուսանող» միջոցառումն է, որտեղ մենք հնարավորություն ենք ունենում ևս մեկ անգամ փաստելու այն հավաքագրական արդյունքը, որը որպես լավագույն կրթության, գիտության, գիտահետազոտական գործընթացների, հասարակական ակտիվության և մի շարք այլ չափանիշների ներկայացվում է: Շնորհակալություն, որ լավագույնները մեզանում շարունակում են մեզ հետ երկխոսել այն ձևաչափով, որն ➤2

ՄԵԿԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է

Համալսարան-դպրոց կապի լավագույն դրսևորումներ են համատեղ միջոցառումները: Հերթական միջոցառումը Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան N 135 դպրոցում էր, ուր Սկզբնական կրթության ֆակուլտետի դասախոս Ժաննա Խաչատրյանի նախաձեռնությամբ ներկայացվել էր 3-րդ կուրսի ուսանողների ստեղծագործական աշխատանքների ցուցադրությունը՝ նվիրված Մանկավարժական համալսարանի 100-ամյակին: Գեղանկարներ, գոբելեն ու դեկորատիվ կիրառական արվեստի տարբեր նմուշներ, հայրենիքին ու բնաշխարհին նվիրված նկարներ. ահա այն ստեղծագործական պրպտումները, որի արդյունքը ներկայացվել էր դասախոսներին, դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին:

Դպրոցի ընդարձակ ու գեղեցիկ սրահում աշակերտները ներկայացրին գրական-գեղարվեստական կոմպոզիցիա՝ նվիրված Մանկավարժական համալսարանի 100-ամյա պատմությանը, ինչպես նաև ժամանակակից պարերի շարք:

Գագիկ Ստեփանյանի անվան N 135 դպրոցում բացված ցուցա- ➤2

Ռազմիկ ԴԱՎՈՅԱՆ

Դրախտի երկիր

Դրախտի երկիր, անհուն դրախտ,
Մեծ երազների փոքրիկ օրրան,
Քո մեջ ծնվեցին քաղցր հույսեր
Եվ քո վիհերում անդարձ կորան:
Դու նրանց տվիր կյանք ու ոգի,
Դու նրանց տվիր թևեր հզոր,
Շնչառությունը քո մեղկ շոգի,
Քո կարոտների ցոլքը բոսոր,
Եվ նրանք ելան գոտեմարտի,
Սակայն չհասան մինչև կեսօր:
Դրախտի երկիր, անհուն դրախտ,
Այս ի՞նչ թախիծ է իջել վրադ,
Քո հերոսներին - քո հույսերին
Մատնել ես նյութի դաժան սրին...
Եվ քո զոհերով բեռնավորված,
Բեռան տակ մինչև հողը կորված,
Գնում ես դեպի անհայտություն,
Տանելով քեզ հետ թախիծ ու թույն:
Ահա իջնում է թանձր գիշեր
Քո հովիտներին փոքրիկ ու խեղճ,
Սակայն վառվում են
խենթ ու խելառ
Պայծառ աստղերդ երկնքիդ մեջ:
Վառվում են նրանք,
վառվո՜ւմ, վառվո՜ւմ,
Նրանք՝ աչքերը խոր ցավերիդ,
Քո կորուստների հուշն են նրանք
Եվ արմատները նոր ծառերիդ:
Դրախտի երկիր, անհուն դրախտ,
Անհուն դրախտի հուշ ու պատկեր,
Դու կորուստներ ես տվել անհուն
Եվ կուտակել ես անհուն պարտքեր,
Շտապիր թվել գալիքներիդ,
Շտապիր թվել անուն-անուն՝
Որ պիտի սրբեն ճակատդ սեգ
Եվ պիտի մարեն
պարտքերդ անհուն:
Դրախտի երկիր, անհո՜ւն դրախտ,
Ես օրորվում եմ քո տաք մահճում,
Եվ ուղեղիս մեջ, հոգուս, սրտիս,
Խանձված խոհեր են
լուռ կանաչում:
Ա՜խ, շնկշնկում են նրանք փափուկ
Եվ ազատվում են թախծի բեռից.-
Նրանց մրմունջն ինձ քուն կբերի
Եվ քեզ կհանի քո թմբիրից:
Դրախտի երկիր, անհո՜ւն դրախտ,
Մեծ օրհնություն քեզ և...
փոքրիկ բախտ:

Գիտելիքը համաշխարհային շուկայում ամենաթանկ ապրանքն է: Գիտելիքը բարոյականություն է, մինչև անգամ՝ ազնվական արտաքին: Բայց ինչպե՞ս անենք, որ դիպլոմի փոխարեն գիտելիք ունենանք...

Սոս ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

➢1 այսօր, որպես հայրենասիրության դրսևորում, դուք ներկայացրիք»:

Սրբուհի Գևորգյանն ուսանողներին շնորհակալություն հայտնեց լավագույն ավանդույթների շարունակման, այն ջանքերի ներդրման համար, որոնք դասախոսների օգնությամբ զարգացնում են և որակական նոր հենքով քայլում դեպի առաջ:

«Սիրելի՛ ուսանողներ, Մանկավարժական համալսարանն իրապես շատ վաղուց փաստել է, որ մեծագույն արժեքը ուսանողն է: Ցանկանում եմ, որ լավագույնը ձեր մասնագիտական ու անձնական որակների համադրման համատեքստում՝ երազանքների մարմնավորման դրսևորումները, լինեն շատ և բազմազան՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և այն ուսուցչի նոր որակի, որը ի դեմս ձեզ, շարունակելու է 100-ամյա համալսարանի առաքելությունն ու ավանդույթները»,- խոսքն ամփոփեց Սրբուհի Գևորգյանը:

Ապա բեմ են հրավիրվում բոլոր ֆակուլտետների լավագույն ուսանողները՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանող Գոռ Մելիքսեթյանը, Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ուսանողուհի Ինեսա Բրուտյանը, Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողուհի Անահիտ Փանոսյանը, Կուլտուրայի ֆակուլտետի ուսանողուհի Ժենյա Աբգարյանը, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ուսանող Արա Հարությունյանը, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողուհի Քնարիկ Համբարձումյանը, Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Աննա Կոստանյանը, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ուսանողուհի Ստելլա Գալստյանը և Օտար լեզուների ֆակուլտետի ուսանողուհի Թամարա Արշակյանը, որոնց ռեկտորի պաշտոնակատարը ծաղիկներ և նվերներ է հանձնում:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատարը հրապարակում է 2021 թվականի Մանկավարժական համալսարանի լավագույն ուսանողի անունը՝ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողուհի Քնարիկ Համբարձումյան:

Ի դեպ, ՀՊՄՀ լավագույն ուսանողները, որպես պարգևատրում, կհանգստանան Վրաստանում, իսկ բուհի լավագույն ուսանողուհին կրթական ծրագրով կմեկնի Ավստրիա:

Ուսանողներին իրենց կատարումներով շնորհավորեցին երգիչներ Սոֆի Մխեյանը և Արսեն Գրիգորյանը՝ Մրեն:

«Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը ևս մեկ անգամ փաստեց՝ լավ կրթություն ստանալու երաշխիքը լավ սովորելն է, ձգտումը ավելիին և սեփական ուժերին հավատալը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

...ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է

➢1 հանդեսի և համալսարան-դպրոց կապի մասին էր ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանի խոսքը: Նա բուհի ղեկավարության անունից ջերմորեն շնորհավորեց բոլորին՝ ասելով, որ նման համատեղ միջոցառումները ավելի սերտ ու երկարատև համագործակցություն կպայմանավորեն կոնկրետ ձևաչափի մեջ: Սրբուհի Գևորգյանն ընդգծեց Սկզբնական կրթության ֆակուլտետի՝ ավանդույթ դարձած ցուցահանդեսները, որոնք «ուսանողների երևակայության ու մտքի ստեղծարարության յուրահատուկ ստուգատես են»:

Սրբուհի Գևորգյանն ընդգծեց, որ նման ցուցահանդեսները դպրոցներում ներկայացնելը առանձնահատուկ խորհուրդ ունի՝ միտված աշակերտների ստեղծագործական մտքի, գեղագիտական ճաշակի զարգացմանն ու դաստիարակությանը:

«Ներկա համատեղ միջոցառումը Մանկավարժական համալսարանի 100-ամյա պատմությանը նվիրված նախաձեռնությունների յուրօրինակ մեկնարկ է, իսկ ցուցահանդեսում ներկայացված են տարբեր տարիների ուսանողների ու շրջանավարտների ստեղծագործություններ՝ կամրջելով ժամանակն ու տարածությունը»:

Ռեկտորի պաշտոնակատարը խոսեց դպրոցի հետ վաղեմի արդյունավետ համագործակցության մասին, որը նպատակ ունի ժամանակի հետագծով տարբեր սերունդների կրթման համատեղ մանկավարժական հարացույց ձևավորել, ինչը այսօրվա հրամայականն է: Այս տեսանկյունից համալսարանը մեծապես կարևորում է դպրոցի ուսուցիչների ու ծնողների մասնակցությունը նման միջոցառումներին, որովհետև «նոր ուսուցչի հայեցակարգում ուսուցչի՝ իր տեղը գտնելու խնդիրը բոլորիս միասնական աշխատանքի արդյունքը պետք է լինի»:

Բանախոսը հավելեց, որ Ժաննա Խաչատրյանի նախաձեռնած ցուցահանդեսը կմեկտեղի ուսումնառության, դաստիարակության և ստեղծագործության բաղադրիչները, իսկ համալսարանի ղեկավարությունը բուհի մասնագիտական կրթական ծրագրերն այսուհետ կիրականացնի այն դպրոցների հետ համատեղ, որոնց վստահությունն ու բարձր գնահատանքը նկատելի է՝ ի դեմ այս դպրոցի տնօրենի:

Նախադպրոցական կրթության և տարրական մեթոդիկայի բաժինների ուսանողների 70-ից ավելի աշխատանքները կցուցադրվեն նաև այլ դպրոցներում, որտեղ անց են կացվում պրակտիկաները՝ աշակերտներին և ուսուցիչներին հաղորդակից դարձնելու իրենց մասնագիտական

որակներին ու կարողություններին, նաև ապահովելով շարունակական համագործակցություն:

Միջոցառմանը ներկա էր նաև Սերգո Երիցյանը, ով իր ելույթում կարևորեց նախաձեռնությունը՝ որպես մասնագիտական կարողությունների դրսևորման ու առկա խնդիրների համատեղ լուծման ձևաչափ: Նա շնորհավորեց բոլորին և մաղթեց նման միջոցառումների պարբերական ընթացք:

«Կերպարվեստ» առարկայի շրջանակում Հայաստանին ու հայոց բնաշխարհին նվիրված ազատ ստեղծագործություններով ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանն ազդարարեց համալսարանի մեկդարյա հոբելյանի միջոցառումների մեկնարկը՝ փաստելով, որ ցուցահանդեսը երկար ճանապարհ ունի անցնելու նաև Երևանի մյուս դպրոցներում: Ցուցահանդեսի ամփոփումը կլինի համալսարանական N 57 դպրոցում՝ այսպիսով «հասարակության առավել լայն շերտերին, կրթության ոլորտի մասնագետներին, ուսուցիչներին, աշակերտներին հաղորդակից դարձնելով բուհի 100-ամյա պատմությանը: Սա համալսարան-դպրոց կապի լավագույն օրինակն է»:

Գագիկ Ստեփանյանի անվան N 135 հիմնական դպրոցի տնօրեն Գարեգին Ներսեսյանը դպրոցի աշխատակազմի անունից Մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակի առթիվ շնորհավորեց բուհի ղեկավարությանը, դասախոսներին, ուսանողներին և շրջանավարտներին: Բուհի մեկդարյա հոբելյանի առթիվ տնօրենը Մանկավաժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանին շնորհեց Գագիկ Ստեփանյանի անվան Ոսկե մեդալ՝ դպրոցների համար լավ ուսուցիչներ պատրաստելու առաքելության և բուհի մեկդարյա հոբելյանի առիթով: Նա վստահեցրեց, որ հոբելյանից հետո պարտավորված են ավելի լավ աշխատել և ցույց տալ ՀՊՄՀ-ի 100 տարվա աշխատանքի արդյունքը:

Միջոցառման մեղավորն էլ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժաննա Խաչատրյանը հավելեց, որ համագործակցությունը նոր չէ, այս դպրոցում իր ուսանողներն անց են կացնում պրակտիկաներ՝ կատարելագործելով իրենց մասնագիտական որակները: Ներկա ցուցահանդեսին էլ իրենց աշխատանքներն են ներկայացրել Տարրական կրթության մեթոդիկայի և նախադպրոցական բաժինների ուսանողները:

Միլվա ԱՍՐՅԱՆ

«Ուսուցչի առաքելությունն այսօր իրապես շատ բարդ է, որովհետև փոխվել է և՛ սոցիալական ըմբռնումը, և՛ աշխարհը, և՛ սոցիալական այն ներազդումները, որոնք պայմանավորված են ուսուցչի մասնագիտական նկրտումներով»,

-ասաց ռեկտորի պաշտոնակար Սրբուհի Գևորգյանը

Մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանը հունվարի 13-ին հանդիպեց բուհի ասպիրանտուրա ընդունված և հայցորդություն ձևակերպած դիմորդների հետ:

«Պատիվ ունենք այսօր ձեզ հետ հանդիպելու և ուրվագծելու այն գործընթացի կազմակերպման և արժեբանության մեթոդական հենքը, որով պայմանավորված մուտք եք գործել Հայկական պետական մանկավարժական համալսարան, և որի շնորհիվ մենք պիտի լուծենք այն կարևոր խնդիրները, որոնք այսօր պայմանավորված են դպրոց-համալսարան համագործակցության ձևավորման շրջանակներում:

Մեր հանդիպմանը մասնակցում է Օուլուի համալսարանի մեր գործընկեր Վեսա Մատտի Սարենիուսը, որը երկար տարիներ համագործակցում է մեզ հետ: Դուք գիտեք, որ Մանկավարժական համալսարանը դեռևս 2011 թվականից որդեգրել է մի քաղաքականություն՝ միջազգային համագործակցության շրջանակներում ներդնելու եվրոպական փորձը, մասնավորապես՝ ֆինական, և որի շնորհիվ մենք վերանայել ենք մեր համալսարանի բոլոր մասնագիտական ծրագրերը, ուսումնական պլանները, մասնագետների պատրաստման գործընթացը: Պետք է ընդգծեմ, որ Օուլուի համալսարանը մեզ հնարավորություն է ընձեռել որակական փոփոխություններ կատարել բոլոր մակարդակներում՝ դասախոսական, ուսանողական, և այդ շարժընթացը մեզ համար պայմանավորել է նոր որակական շունչ:

Այսօր մենք հանդիպել ենք Մանկավարժական համալսարանի նոր ժամանակաշրջանում. այս տարի մուտք ենք գործել մեր համալսարանի 100-ամյակի շրջան: Շատ հաճելի էր, որ հենց այսօր Երևանի 135 հիմնական դպրոցում տեղի ունեցավ մի շատ հետաքրքիր միջոցառում, որը կազմակերպել էր Սկզբնական կրթության ֆակուլտետը, և շատ հաճելի անակնկալ էր նաև ինձ՝ որպես ռեկտորի պաշտոնակատարի, այդ դպրոցի շքանշանով պարգևատրելը՝ պայմանավորված դպրոցի որակյալ մասնագետ ներ պատրաստելու մեր առաքելությամբ:

Մանկավարժական համալսարանի այս տարվա կարգախոսն է՝ «365 օր դպրոցում աշակերտի և ուսուցչի հետ», որը մեկնարկել է հենց Սկզբնական կրթության ֆակուլտետի մասնագետների շնորհիվ: Դուք էլ, որպես Մանկավարժական համալսարանի տեսլականը ներկայացնող մասնագիտական համախումբ, ձեր մասնագիտական գործընթացը զարգացնելու, նոր որակական շունչ բերելու առաքելությամբ պիտի կարողանաք արդեն գործնականում խնդիրները ձևավորել դպրոցներում աշակերտների և ուսուցչի հետ, և այդ գիտահետազոտական գործունեությունն արդեն իրականացնեք մասնագիտական ամբիոններում՝ համալսարան-դպրոց համագործակցության նոր որակական պահանջներին համապատասխան»:

Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց բոլորի մուտքը Մանկավարժական համալսարան՝ բարի երթ մաղթելով ասպիրանտների և հայցորդների մասնագիտական երազանքների ու ձգտումների կատարմանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը ևս շնորհավորեց համալսարանի ասպիրանտներին և հույս հայտնեց, որ ուսումնառության տարիները կլինեն բեղմնավոր, կլրացնեն նրանց գիտելիքները: «Վստահեցնում եմ՝ ամեն ինչ ձեզնից է կախված»,-ասաց պրոֆեսոր Թոփուզյանն ու հորդորեց լինել հետևողական, նպատակասլաց ու նախաձեռնող, որ կարողանան սահմանված ժամկետներում հասնել գիտական աստիճանին: Պրոֆեսորը վստահեցրեց՝ բուհում ստեղծված են աշխատող մարդուն խրախուսելու, օգնելու և աջակցելու բոլոր պայմանները, որ Մանկավարժական համալսարանի առաքելությունը տարբերվում է այլ բուհերի առաքելությունից.«Լավ մասնագետը պիտի կարողանա իմացածը փոխանցել սովորողներին, ուսանողներին: Որպես հայցորդներ և ասպիրանտներ, ձեզ վրա այդ առումով կրկնակի պատասխանատվություն կա: Առաջին իսկ օրից ճիշտ նպատակներ սահմանեք՝ ճանաչելով ինքներդ ձեզ»,-ասաց Սիդա Թոփուզյանն ու վստահեցրեց՝ միասին կհաղթահարեն բոլոր խոչընդոտները:

«Ուսուցչի առաքելությունն այսօր իրապես շատ բարդ է, որովհետև փոխվել է և՛ սոցիալական ըմբռնումը, և՛ աշխարհը, և՛ սոցիալական այն ներազդումները, որոնք պայմանավորված են ուսուցչի մասնագիտական նկրտումներով», - ասաց ռեկտորի պաշտոնակատարը:

Ելույթ ունեցավ համալսարանի գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանը.«Այսօր Մանկավարժական համալսարանի համար կրկնակի տոն է. ասպիրանտական, հայցորդական կրթության և գիտության համար առաջին օրը մենք համարում ենք այս օրը: Ողջունում եմ բոլորիդ: Սա բակալավրական և մագիստրոսական կրթություն չէ, սա այլ որակ է, երբ մարդն իր հնարավորություններով առանձնանում է, ինքնուրույնություն դրսևորում և պատկերացնում իր ապագան: Դուք եք ձեռնամուխ լինելու վաղվա գիտնականի, ուսուցչի, դասախոսի գործունեությանը, և այդ տեսանկյունից մենք շատ կարևորում ենք այս գործընթացը:

Այստեղ նստած են մեր համալսարանի ճանաչված գիտնականները, որոնց դուք կճանաչեք ընթացքում: Մենք մեծ պատասխանատվությամբ ենք վերաբերվում ձեր գործունեությանը, մենք հսկելու ենք ձեր կարիերայի ողջ գործընթացը, մենք առաջնորդվելու ենք պատասխանատվության այն բարձրագույն աստիճանով, որը գոյություն ունի: Կրկին շնորհավորում եմ ձեզ՝ կյանքի ճանապարհին նոր գործունեության և որակական աստիճանի հասնելու հետ կապված: Ձեզ բարի երթ»:

Հանդիպմանը ներկա էին նաև համալսարանի և հանրապետության գիտական կյանքում ճանաչում ունեցող գիտնականներ: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պորֆեսոր Իգոր Կարապետյանը հայցորդներին և ասպիրանտներին հորդորեց օգտվել երիտասարդ գիտնականին ընձեռած հնարավորություններից՝ մասնակցել և նաև գիտական ղեկավարներին ներգրավել միջազգային ծրագրերում, տպագրվել միջազգային ամսագրերում:

Հայոց պատմության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Սարգսյանն էլ շնորհակալություն հայտնեց պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ լավ վերաբերմունքի և պատասխանատվության համար՝ հույս հայտնելով, որ իրենցից յուրաքանչյուրն իր ոլորտում կանի հնարավորը:

Սրբուհի Գևորգյանը հանդիպումն ամփոփեց՝ ընգծելով, որ բուհի դիմագիծը որոշողը մանկավարժությունն է, դասավանդման մեթոդիկան և հոգեբանությունը: Նա ներկայացրեց՝ այստեղ են մանկավարժության և հոգեբանության դոկտորներ, որոնցով էլ պայմանավորված է ասպիրանտների և հայցորդների առաջընթացը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար պարոն Գեբհարդ Ռոյլը և Հայաստանի համար DAAD կրթաթոշակային ծրագրերի խորհրդատու Արևիկ Հարությունյանը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան էին այցելել:

Հավելենք, որ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունն ուսանողների և գիտնականների միջազգային փոխանակման խոշորագույն կազմակերպությունն է աշխարհում: DAAD-ն միակ կրթաթոշակային կազմակերպությունն է Հայաստանում, որը խրախուսում է բոլոր բնագավառների ուսանողներին և գիտնականներին: Առաջին անգամ հայ ուսանողները կրթաթոշակներ են ստացել 1990 թվականին, այս ընթացքում DAAD-ի կրթաթոշակներից օգտվել է ավելի քան 2500 հայ ուսանող և գիտնական:

ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետը նույնպես ակտիվ մասնակցություն է ցուցաբերում տարածաշրջանային գրասենյակի հետ և համագործակցության շրջանակներում գիտահետազոտական ծրագրերին և վերապատրաստումներին մասնակցելու հնարավորություն

ստանում:

Գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար DAAD-ն լավագույն հնարավորությունն է ոչ միայն գերմանագիտության, այլև այլ բնագավառների մասնագետների և ուսանողների համար:

ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային հարաբերությունների գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը կարևորեց Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության դերը համալսարանի միջազգայնացման, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև տարբեր բնագավառները DAAD ծրագրում ներգրավելու հնարավորությունները:

ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Սրբուհի Լուլուկյանն առանձնացրեց միջֆակուլտետային, միջհամալսարանական և միջազգային կառույցների հետ կապի ընդլայման և կրթական որակի բարձրացման հնարավորությունները վերոնշյալ համագործակցության շրջանակում:

(DAAD) Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի հետ համագործակցության արդյունքում ՀՊՄՀ դասախոսները և ուսանողները հնարավորություն կունենան ոչ միայն դիմել կրթաթոշակների համար, այլև ստանալ խորհրդատվություն Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի Հայաստանի համար պատասխանատու մասնագետ Արևիկ Հարությունյանից, ով կհամակարգի նաև կազմակերպության բոլոր ծրագրերը Հայաստանում:

(DAAD) Թբիլիսիի տարածաշրջանային նոր գրասենյակի հետ համագործակցության մեկնարկը կտրվի ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում:

Շախմատի կրթական զարգացման համապեքստում

Շախմատը սպո՞րտ է, գիտությո՞ւն, թե՞ արվեստ…

Այս հարցին տարբեր ժամանակներում տարբեր մոտեցումներ են ցուցաբերել. խորհրդային տարիներին այն համարվել է սպորտ, մեր օրերում շախմատը տարվում է կրթության ու գիտության կողմը, իսկ թերևս կես դար հետո այն կդիտվի արվեստի մեջ…

Այսպես պատասխանեց դասախոսներից մեկի հարցին Սմբատ Լպուտյանը: Իսկ հարցերը շատ էին, նպատակներն ու խնդիրները՝ բազմազան: Մեկ ընդհանրություն կար բոլորի ելույթներում ու նկատառումներում՝ Մանկավարժական համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գործունեությունը առավելագույնս ծառայեցնել շախմատի կրթական զարգացմանը՝ կրթության ու գիտության համատեքստում խմբավորելով խնդիրները, դրանք դուրս բերել միջազգային հարթակ:

Հունվարի 18-ին բուհում կազմակերպված ընդլայնված հանդիպմանը մասնակցում էին երեք՝ Սկզբնական կրթության, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետների դեկաններն ու ամբիոնների վարիչները:

Հանդիպումը բացեց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանը: Նա ներկայացրեց լայն ձևաչափով հրավիրված աշխատաժողովի հիմնական նպատակը՝ փաստելով, որ «Շախմատային կրթությունը Մանկավարժական համալսարանի կարևոր ձեռքբերումներից է, և այդ ոլորտում բուհն ունի նկատելի հաջողություններ, որոնցով կարելի է ներկայանալ աշխարհին»:

Հանդիպման օրակարգում «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գործունեության և մի քանի ֆակուլտետների հետ համագործակցության հնարավորությունների քննարկումն էր:

Վերջինս ներկաներին հրավիրեց միասնաբար աշխատել «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտ-ֆակուլտետներ կապի ամրապնդման նոր ձևաչափի շրջանակում: Խոսելով հետազոտություն-կրթություն թույլ կապի մասին՝ Ս. Գևորգյանը կարևորեց գիտահետազոտական ինստիտուտի և ֆակուլտետների գիտակրթական, գիտագործնական, գիտահետազոտական և մեթոդական բաղադրիչի մեկտեղումը: Նա ընդգծեց, որ ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտն իր գործունեության ուրույն ուղղվածությամբ առայժմ միակն է աշխարհում, որն իրականացնում է շախմատի դասավանդման հոգեբանական, կրթական և սոցիոլոգիական հիմնախնդիրների հետազոտություններ:



Ռեկտորի պաշտոնակատարը նաև խոսեց ինստիտուտի առաքելության մասին, այն է՝ հանրակրթական դպրոցներում շախմատի դասավանդման ուսումնասիրությունների միջոցով հետամուտ լինել «Շախմատ» առարկայի կրթական արժեքին, շախմատի միջոցով երեխայի կոգնիտիվ կարողությունների զարգացման հնարավորություններին, 21-րդ դարի սովորողի կարևորագույն կոմպետենցիաների ձևավորման վրա շախմատի ուսուցման ներգործությանը:

Համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի առաքելությունը համառոտ ներկայացրեց Սմբատ Լպուտյանը: Նա խոսեց գիտահետազոտական ինստիտուտի ձեռքբերումների մասին, հորդորելով, որ միասնական ջանքերով նոր հաջողությունների և ճանաչման կարելի է հասնել:

«Այսօր աշխարհի բոլոր ծագերում շախմատն առաջընթաց զարգացումներ է ունենում: Մեր համալսարանն էլ ավելի ակտիվ գործունեություն պետք է ծավալի, իսկ ճանաչումը շատ կարևոր է, որը կբերի նոր գործընթացներ՝ գործունեության նոր ուղիներ բացելով մեր առաջ»,-ասաց «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, ՀՊՄՀ Շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ, ՀՀ Շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ, գրոսմայստեր, ՖԻԴԵ-ի հանձնաժողովի նախագահ Սմբատ Լպուտյանը:

Նա շեշտը դրեց կրթության համատեքստում շախմատի զարգացման ուղղությամբ հետազոտությունների, Շախմատի միջազգային ֆեդերացիայի կողմից առաջին անգամ ստեղծվող Շախմատի հետազոտական ամսագրի, շախմատի ուսուցչի պատրաստման նոր մոդելի և համալսարանի ողջ ներուժը ճանաչմանն ուղղորդելու համատեղ աշխատանքի վրա:

Խոսելով թիմային աշխատանքի մասին՝ որպես հաջողության գրավական, Ս.Լպուտյանն այն կարևորեց նաև շախմատի դեպքում, ընդգծելով, որ համալսարանի այդ կառույցը մեծ առաքելություն ունի շախմատի կրթական բաղադրիչը հանրայնացնելու, նրա միջոցով կրթական հիմնախնդիրներ վերհանելու և այդ ուղղությամբ լուրջ գործունեություն ծավալելու տեսանկյունից:

Առարկայի դասավանդման վերաբերյալ ինստիտուտի մշակած հայեցակարգն արդեն թարգմանվել է մի շարք լեզուներով: Դա արդեն իսկ կարևոր ձեռքբերում է, բայց չպետք է հետ մնալ աշխարհում կրթական շախմատի վերաբերյալ կատարվող հետազոտություններից:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտական ծրագրերի ղեկավար Վահան Սարգսյանը մատնանշեց առաջնահերթություն համարվող ուղղությունները, որոնց շուրջ պետք է ծավալել ակտիվ նախաձեռնողական աշխատանքներ: Նա խոսեց շախմատի ուսուցիչների վերապատրաստման, ստորաբաժանման ռեսուրսների օգտագործման մասին՝ որպես լաբորատորիա, ուսանողների կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաները շախմատի կրթական զարգացման հիմնախնդիրների համատեքստում կազմակերպելու անհրաժեշտության, Շախմատի գիտահետազոտական ինստիտուտը և շախմատի ուսուցման դասարանները պրակտիկանների անցկացման իրական բազա դարձնելու, մեդիալաբորատորիաների հետ համագործակցության, և այլ խնդիրների շուրջ՝ հավելելով, որ «շախմատը որպես կոմյունիկատիվ ուղղություն՝ կարելի է նաև օգտագործել հետպատերազմական շրջանում մարդկանց ստեղծված իրավիճակներից հանելու համար»:

Այնուհետև տեղի ունեցավ շահագրգիռ քննարկում, որի ընթացքում դեկանները և մյուս ներկայացուցիչները վերոհիշյալ ստորաբաժանման հետ հոգեբանական, սոցիալական և ներառական կրթության ուղղություններով ֆակուլտետների հետ համագործակցության կարևոր ու հրատապ ուղղություններ ու հիմնախնդիրներ մատնանշեցին՝ ուրվագծելով առաջիկա կոնկրետ անելիքները:

Ինչպես նշեց Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը՝ «ներառական կրթությունը շատ ընդգրկուն է և այդ համատեքստում կարիք ունենք շախմատի մեթոդական ուղղությունների մշակման, երկիրը գնում է համընդհանուր ներառման, ուստի ուսուցիչների վերապատրաստման մոդուլի մեջ ֆակուլտետը պետք է ունենա իր մասնակցության գործակիցը»:

Հոգեբանական գիտությունների դոկտոր Վլադիմիր Կարապետյանը «շախմատագիտություն» հասկացության մեջ ամփոփեց շախմատի կրթական բոլոր բաղադրիչները՝ շեշտադրելով շախմատի դերը հետազոտական համալսարանի կայացման ճանապարհին և այն համարելով նաև վարքի կառավարման կարևոր մոդել:

Պրոֆեսորը խոսեց դասախոսի և ուսանողի հետազոտական կորագծի մասին՝ փաստելով, որ ավարտական աշխատանքի թեման չպետք է ընտրվի պատահականորեն, այլ այն պետք է զարգացնել դեռևս առաջին կուրսից:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը ներկայացրեց իր ղեկավարած ֆակուլտետի տեսլականն այդ ուղղությամբ և մշակած քայլերը:

Ամփոփելով աշխատաժողովը՝ ռեկտորի պաշտոնակատարը ևս մեկ անգամ ընդգծեց համալսարանի ֆակուլտետների սերտ համագործակցության անհրաժեշտությունը «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի հետ՝ ասելով, որ վերջնարդյունքները պետք է լինեն համագործակցված և չափելի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Միջազգային համագործակցության շրջանակում

Դեկտեմբերի 13-17-ը ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, դոցենտ Էդգար Հովհաննիսյանը, փոխդեկան, պրոֆեսոր Սամվել Պողոսյանը և Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը Էրազմուս+ ծրագրի շրջանակում դասախոսություններ են ներկայացրել Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հայագիտության բաժնի ուսանողների համար:

Բանախոսների «Գաղութից սփյուռքի անցման գործընթացը», «Հայոց ցեղասպանությունը. գործընթացը և հետևանքները», «Անդրկովկասի խորհրդայնացումը» թեմաներով դասախոսությունները մեծ հետաքրքրություն են առաջացրել հայ և հունգար ուսանողների շրջանում:

Դասախոսություններին հաջորդել են հանդիպում-քննարկումներ, որի ընթացքում ներկայացվել են Հունգարիայի բուհերում սովորող շուրջ երեք տասնյակ ուսանողների հետ առավել սերտ համագործակցության, հայ ուսանողական միություն հիմնելու և այլ հարցեր:

Բուհերի միջև հետագա համագործակցությունը շարունակելու և ամրապնդելու վերաբերյալ հանդիպումներ են եղել Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի Միջազգային հարաբերությունների գրասենյակի ղեկավար Ռիխարդ Սոմարջայի-Դորֆլեյնի և Էրազմուս+ ծրագրի համակարգող Հենրիետա Նովակի հետ:

Հիշեցնենք, որ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանների միջև 2016 թվականին ստորագրվել է երկկողմ համաձայնագիր, որի շրջանակում բուհում պաշտոնապես բացվել է Հայագիտության ամբիոն:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԵՔԻԱԹ ԴԱՐՁԱՎ ԻՆՁ ՀԱՄԱՐ

Հիմա հետադարձ հայացքով նայում եմ ու հասկանում, որ Մանկավարժական ինստիտուտում սովորելու տարիները կյանքիս լավագույն շրջաններից մեկն է եղել: Այն ժամանակ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը հնգամյա ուսուցմամբ էր: Ես ընդունվեցի Պատմալեզվագրական ֆակուլտետը, որը տալիս էր երեք մասնագիտություն: Այստեղ ուսանելու համար ես պարտական եմ հրաշալի լեզվաբան Վաղարշակ Քոսյանին:

...Նոր էի ավարտել Լենինականի բժշկական ուսումնարանը, փաստաթղթերի փաթեթը թևիս տակ, նստեցի բանվորական գնացք՝ էլեկտրիչկա, և 6 ժամում Լենինականից հասա Երևան՝ գործերս հանձնելու Երևանի պետական համալսարան: Մայրս 13 զավակ է ունեցել, ես 13-րդն էի, և նրանցից միայն ես բարձրագույն կրթություն ստացա, մյուսները գնացին իրենց ճանապարհով... Դեռ էն գլխից երևում էր, որ ես բանաստեղծական հակումներ ունեմ... Ու քանի որ առավոտյան ժամը 6-ն էր, համալսարանի դռները փակ էին, ես Աբովյանով իջա հրապարակի ցայտաղբյուրների մոտ: Դիմացս մի մարդ դուրս եկավ, ով ճանաչեց ինձ և հարցրեց. «Դու Դավոյենց Լուսիկի տղա՞ն ես...»: Այդ մարդը Վաղարշակ Քոսյանն էր: Նա ծնունդով Սպիտակի Մեծ Պարնի գյուղից էր. մենք համագյուղացիներ էինք: Երբ իմացավ, որ ուզում եմ ընդունվել Երևանի պետական համալսարան, ասաց. «Ի՜նչ համալսարան, մեր ազգային գիտության ամբողջ հրաշալի կազմը Մանկավարժականում է, գործերդ կբերես Մանկավարժական...Դու պետք է վստահես ինձ և գործերդ բերես Մանկավարժական...»: Դա 1958 թվականին էր:

Քննությունները հանձնեցի, բայց այնպես ստացվեց, որ ես և մի տղա՝ Կառլեն Հակոբյան անունով, ով բանաստեղծություններ էր գրում, հայտնվեցինք պայմանական ընդունելության տակ: Մենք՝ դիմորդներս, այդ ընթացքում Թոխմախ գյուղի մոտ գտնվող հանրակացարանում էինք ապրում, փայտոջիլների ընկերակցությամբ, և արդեն որոշ չափով ծանոթացել էինք մեկմեկու: Մեզնից մեկը պիտի ընդունվեր, իսկ այդ տղան արդեն երրորդ տարին էր՝ դուրս էր մնում ընդունելությունից: Բացի այդ, նրա համար նամակ-երաշխավորագիր էր գրել Ավետիք Իսահակյանը: Ես որոշեցի այդ տեղը թողնել Կառլենին և հաջորդ տարի նորից մասնակցել ընդունելության քննություններին: Վերադարձա Լենինական և երեք խոշոր գործարաններում աշխատեցի որպես սանիտարական հսկիչ:

Հաջորդ տարի ես բարձր նիշերով հանձնեցի քննությունները և ընդունվեցի Մանկավարժական ինստիտուտի Պատմալեզվագրական ֆակուլտետ: Այսօրվա պես հիշում եմ՝ Զավեն Գրիգորյան կար, պատմաբան, հետագայում՝ կենտկոմի քարտուղար, նրա մասին ասում էին, որ դաժան մարդ է և ազգասեր չի... արևմտահայերենը նա համարել էր հայոց լեզվի բարբառ...Նա պատմության քննության հանձնաժողովի նախագահն էր: Պատմություն առարկայի քննությանը ես նստած բանաստեղծություն էի գրում, փոխանակ պատմության հարցերի վերաբերյալ նշումներ անեի, և Զավեն Գրիգորյանը նկատել էր... Նա մոտեցավ ինձ, գրածս վերցրեց ու գնաց: Երբ պատասխանելու իմ հերթը հասավ, նա բարձրաձայն կարդաց գրածս բանաստեղծությունը և ասաց՝ ապրես, գերազանց: Եվ այսպես, 1959 թվականին ես ընդունվեցի բուհ և Մանկավարժական ինստիտուտը հեքիաթ դարձավ ինձ համար:

Տիտաններ էին բոլոր նրանք, ովքեր մեզ դասախոսում էին: Մեր կուրսում 52 հոգի էինք, բոլորը գրում էին դասախոսությունները, ես չէի գրում, միայն լսում էի... Ակադեմիկոս Մորուս Հասրաթյան. գագաթ էր մի քանի մասնագիտությունների գծով՝ բնագիտություն, պատմություն, բանասիրություն... Առաքել Առաքելյան՝ հայոց մշակույթի պատմություն, Վարդգես Համազասպյան, հայ ժողովրդի պատմության, հայ գրականության մասնագետներ՝ Արշալույս Բաբայան, Վաչե Պարտիզունի, Եղիշե Պետրոսյան, պատմություն՝ Արտաշես Պողոսյան, օտար լեզուներ՝ Ռաֆայել Տարոնացի, ֆրանսագետ, 10 տարի ապրել էր Փարիզում, ռուսաց լեզու՝ Սուսաննա Պետրովնա, լեզվաբաններ՝ Աշոտ Աբրահամյան, ով ոսկեդարյան ձեռագրերը անգիր գիտեր, Աճառյանի անձնական գրադարանում էր սովորել, նրա մոտ կրթություն ստացել, Վաղարշակ Քոսյան, Արարատ Ղարիբյան, Էդվարդ Աղայան, հայ հին գրականության մասնագետ Աշոտ Մկրտչյան, Պետրոս Բեդիրյան... Աներևակայելի էր նրանց լսել, նրանք իմաստության շտեմարաններ էին: Մի խոսքով ամբողջ կրթական դաշտը լցված էր տիտաններով... Հրաշալի տարիներ էին: Պարույր Սևակը գրել էր «Անլռելի զանգակատուն» պոեմը և եկել էր մանկավարժականի ուսանողների հետ հանդիպման: 1959 թվականին էր, ես առաջին կուրսի ուսանող էի, և ինձ ասել էին, որ պոեմի մասին խոսեմ... Սևակը տպավորվել էր իմ ելույթից: Հետագայում, երբ Վիգեն Խեչումյանի մոտ տեսել էր իմ ձեռագիրը, որ հրատարակության էր պատրաստվում, կարդացել էր և ասել՝ այս գիրքը ես պետք է խմբագրեմ: Դա իմ առաջին՝ «Իմ աշխարհը» գիրքն էր...

Հրանտ Մաթևոսյանն ինձնից հինգ տարով մեծ էր, թեև մեկ տարվա տարբերությամբ ավարտեցինք: 40 տարի ընկերություն արինք: Շատ ջերմ ընկերություն էր, և մենք հպարտանում էինք դրա համար...

Մեր կուրսն իսկապես շատ լավն էր, շատերը հետագայում զբաղվեցին գիտությամբ, աղջիկների մեծ մասն էլ մանկավարժական գործունեություն ծավալեց: Ուսանողությունն էլ եղել է, կա ու կլինի ուսմանը մատների արանքով նայող կամ ուսման իսկական հարգը իմացող երիտասարդների մի զանգված...

Ռազմիկ ԴԱՎՈՅԱՆ
ՀՊՄՀ 1964 թ. շրջանավարտ
«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ, 17.11.2017 թ.
Զրույցը գրի առավ Սիլվա ԱՍՐՅԱՆԸ

81 տարեկանում կյանքից հեռացավ Մանկավարժական համալսարանի շրջանավարտ, բանաստեղծ, գրող, հրապարակախոս Ռազմիկ Դավոյանը



Ռազմիկ Դավոյանը ծնվել է 1940 թ. հուլիսի 3-ին Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղում: Տարրական կրթությունը ստացել է տեղի դպրոցում: 1949-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Գյումրի, ուր ավարտել է միջնակարգ դպրոցը և տեղի բժշկական ուսումնարանը:

1959-1964 թվականներին սովորել և ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը:

Ուսանելուն զուգընթաց աշխատել է «Գիտություն և տեխնիկա» ամսագրի հիմնադիր խմբագրությունում, նաև «Գրական թերթի» խմբագրությունում՝ որպես սրբագրիչ: 1965-ից վարել է «Գրական թերթի» պոեզիայի և արձակի բաժինը: 1970 թ. աշխատել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում՝ որպես ավագ խորհրդական: 1975-1990 թթ. եղել է Հայաստանի պետական մրցանակների կոմիտեի պատասխանատու քարտուղարը:

1989-ին նշանակվել է Հայաստանի Գերագույն խորհրդի Աղետի գոտու հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ:

1991-1999 թթ. եղել է Համազգային հայ կրթական և մշակութային միության՝ Հայաստանի վարչության նախագահը:

1994-1996 թթ. Հայաստանի Գրողների միության վարչության նախագահն էր:

1999-2003 թթ.՝ Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդական:

2005-2007 թթ.՝ «Երևան» վավերագրական ֆիլմերի ստուդիայի տնօրեն:

2007-2018 թթ.՝ «Հ1» հեռուստաընկերության տնօրենի խորհրդական:

Առաջին բանաստեղծությունը տպագրվել է 1957 թ. Լենինականի «Բանվոր» թերթում, առաջին ժողովածուն՝ 1963-ին: Ավելի քան 40 ժողովածուի և գրքերի հեղինակ է, այդ թվում՝ ռուսերեն, չեխերեն և անգլերեն լեզուներով: Նրա ստեղծագործությունները տպագրվել են իտալական, ֆրանսիական, հարավսլավական, իրանական, չինական և ամերիկյան պարբերականներում: Ռազմիկ Դավոյանի կյանքին ու գործունեությանն անդրադարձել են «Լիտերատուրնայա Գազետա», ֆրանսիական «Ֆիգարո» բրիտանական «Թայմզ» և «Ուասաֆիրի» պարբերականները:

1969-ին՝ հինգ տարի արգելափակվելուց հետո, հրատարակվում է «Ռեքվիեմը», 1972-ին առաջին անգամ Բեյրութում՝ «Խաչերի ջարդը» պոեմը, իսկ «Թորոս Ռոսլին» պոեմը առաջին անգամ տպագրվում է Նյու Յորքում, 1984-ին:

Չեխական հեղինակավոր «Օդեոն» հրատարակչությունը նրա ստեղծագործությունները ներառել է համաշխարհային գրականության անթոլոգիայում:

Պարգևատրվել է մի շարք պետական պարգևներով՝ ՀԽՍՀ պետական մրցանակ, Հայաստանի պետական մրցանակ, Հայաստանի Պետական առաջին կարգի մրցանակ, Հայաստանի «Մեսրոպ Մաշտոց» մեդալ, Հայ Առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» մեդալ, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ, Հայաստանի վարչապետի հուշամեդալ, Երևանի պատվավոր քաղաքացի:

Մանկավարժական համալսարանի անվանի շրջանավարտը հաճախ էր հյուրընկալվում բուհում: Դասախոսների և ուսանողների հետ հանդիպմանը նա մշտապես անթաքույց սիրով ու հիացմունքով էր խոսում հարազատ բուհի մասին, վերհիշում անցյալն ու տարիների հեռվից ապագա մանկավարժներին ներկայացնում ուսանողական տարիներին ապրած հետաքրքիր պատմություններն ու հիշարժան դրվագները: Բուհի 90-ամյակի առթիվ Ռազմիկ Դավոյանին շնորհվեց «Մանկավարժական համալսարան» մեդալ:

Մանկավարժական համալսարանն իր խորը վշտակցությունն է հայտնում Ռազմիկ Դավոյանի՝ շնորհաշատ բանաստեղծի և բուհի անվանի շրջանավարտի հարազատներին, մտերիմներին ու գործընկերներին:

ՀՈՒՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Հունվարի 11-ին Երևանում՝ Դաբլթրի բայ Հիլթոն հյուրանոցում, Հայաստանում ընտրական գործընթացների և քաղաքական հաշվետվողականության ամրապնդում ծրագրի շրջանակում անցկացվեց «Ներգրավված քաղաքացի» ուսումնական դասընթացի ներդրման հուշագրի ստորագրման արարողությունը:

Մինչ հուշագրի ստորագրումը ելույթ ունեցան ԱՅ ԷՖ Ի ԷՍ հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ժերոմ Լեյրոն, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Ռազմավարության և ծրագրերի աջակցության գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Ջուլի Պեկովսկին, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Խաչատուր Ղազեյանը:

2021 թվականին մեկնարկած դասընթացի պիլոտային ծրագրին մասնակցել է հայաստանյան 5 համալսարան: Հուշագրի ստորագրումով ծրագրին միացավ Հայաստանի ևս 6 համալսարան՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Գորիսի պետական, Հայաստանի ազգային ագրարային, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական, Հայբուսակ համալսարանները և Հայաստանի պետական կառավարման ակադեմիան:

Դասընթացի նպատակն է ուսուցման ժամանակակից ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ խթանել ակտիվ քաղաքացիության, ժողովրդավարական կառավարման և մարդու իրավունքների հասկացությունների ընկալումը մեր երկրում: Դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ուսանողներին կօգնեն ակտիվորեն ներգրավվել քաղաքացիական գործընթացներին:

Ժերոմ Լեյրոնը կարևորեց ծրագրի ներդրման անհրաժեշտությունը կրթության ոլորտում՝ մասնավորապես համալսարաններում՝ այն համարելով քաղաքացիական կրթության զարգացման գործընթաց:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն իր ելույթում ասաց.«Դժվար է գերագնահատել քաղաքացիական կրթության դերն այսօր, երբ մեր երկիրն ընտրել է ժողովրդավարության ուղին: Այսօր ֆորմալ կրթության համակարգում ներդրված պետական չափորոշիչների հիմքում դրված է նաև «Ներգրավված քաղաքացի» ծրագրի սկզբունքները: Սա է այն հիմքը, որով մենք կունենանք իրազեկ ու ակտիվ քաղաքացի, որը կարող է պրակտիկորեն հմտորեն կիրառել իր գիտելիքները»:

Նախարարի տեղակալն ընդգծեց, որ դասընթացն ուղղված է ողջ ուսանողական հանրությանը՝ անկախ մասնագիտություններից, ապա շեշեց, որ դա հերթական ձեռնարկ չէ, այլ կարևոր ու լուրջ ձեռնարկ, որն իր ինտերակտիվությամբ հաստատում է սովորողակենտրոն կրթության փաստը մեզանում:

Մյուս բանախոսները ևս կարևորեցին դասընթացի ներդրման անհրաժեշտությունը Հայաստանի համալսարաններում, ընդգծեցին պիլոտային ծրագրի արդյունավետ ներդրումը նախորդ համալսարաններում՝ ընդգծելով, որ ժամանակակից աշխարհում մեծացել է քաղաքացիական հասարակության դերը և որ կրթության միջոցով է հնարավոր դաստիարակել լավ քաղաքացիներ:

Ներկաները դիտեցին ֆիլմ մեկ տարում կատարված աշխատանքների մասին, ապա 6 համալսարանների ղեկավարների հետ ստորագրվեց դասընթացը համալսարաններում ներդնելու հուշագիր: ՀՊՄՀ-ից հուշագիրը ստորագրեց աշխատակազմի և միջազգային գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Ծրագրի հայաստանյան համակարգող Նարեկ Ղրուզյանը ներկայացրեց, որ ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ը լավ փորձ ունի և միտված է Հայաստանում խթանելու քաղաքացիական կրթությունը:

Հավելենք, որ ծրագիրը կշարունակվի մինչև 2025 թվականը:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ 30 ՏԱՐԵԿԱՆ Է

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Տիգրան Պետրոսյանց, Երևան, 2021, 212 էջ:

ՎԱՀԱՆԻ ՎՐԱ ԿԱՄ ՎԱՀԱՆՈՎ...

Նրանք, ովքեր ճակատագրական պահի ոտքի ելան հող հայրենիի համար, մարտի դաշտ մեկնելուց առաջ երդվեցին՝ Վահանի վրա կամ վահանով...

Այդպիսի երդումով մարտադաշտ մեկնեցին Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի սաներն ու շրջանավարտները՝ Արցախյան առաջին, երկրորդ և երրորդ գոյամարտերի շեմին:

Արցախյան երեք պատերազմներին մասնակցել են շուրջ երեք հարյուր աբովյանցիներ. նրանցից հիսունյոթն ընկան անհավասար մարտերում՝ իրենց կյանքը դնելով հայրենիքի փրկության զոհասեղանին, քաջարի մյուս մարտիկները վերադարձան փառքի դափնիներով, ընկած հերոսների հանդեպ խորին ակնածանքով...

Արցախյան հերոսապատումին մասնակցած աբովյանցիների կենսագրական հանրագիտարան է կազմել Արցախան առաջին պատերազմի մասնակից, փոխգնդապետ Տիգրան Պետրոսյանցը՝ «Հայրենիքի համար» վերտառությամբ:

Գրքում հակիրճ տրվում են մարտիկների կենսագրականը, նրանց անցած մարտական փառավոր ուղին, գործած սխրանքները մարտի դաշտում, նահատակությունը, փառքով վերադարձածների հայրենանվեր գործունեությունը մայր Հայաստատում:

Ցավով ու կսկիծով ես թերթում այն մարտիկների կենսագրականը, ովքեր դարձան ուխտադրուժ հարձակման առաջին զոհերը, ովքեր նահատակվեցին զինադադարից ժամեր առաջ, ովքեր անօրինակ սխրանքներ գործելով փրկեցին իրենց ընկերներին, սակայն իրենք ընկան՝ երկնքում միանալով Վարդանանց սուրբ նահատակներին...

Համալսարանի գրեթե բոլոր ֆակուլտետների սաներն ու շրջանավարտները մասնակցել են Արցախյան գոյամարտին:

Աբովյանցիները մարտադաշտ են մեկնել՝ իրենց սրտում կրելով մայր բուհից ստացած հայրենասիրության դասերը? մանկավարժները հայրենասերի ոգով պետք է դաստիարակեին սաներին ոչ միայն դպրոցում, այլև այդ ոգով պետք է պաշտպանեին մայր հայրենիքը ոսոխի բարբարոս հարձակումներից: Եվ այդ ոգին, նախնյաց կանչին հավատարիմ, նրանց տանում է խիզախության արահետներով...

Արցախյան առաջին գոյամարտի զինվորներն իրենց հոգիներում կրում էին հող հայրենին բարբարոսների լծից ազատագրելու առաքելություն. դա ազատագրական պայքարի թատերաբեմ էր, որ ոտքի էր հանել հանուր հայությանը, որտեղ իրենց սխրանքներով աչքի ընկան և անմահացան փառապանծ աբովյանցիները՝ ՀՀ Ազգային հերոս Մովսես Գորգիսյանը, գումարտակի հրամանատար Մեխակ Մեխակյանը, ավագ լեյտենանտ Արեն Գրիգորյանը, Մելիքսեթ Ասատրյանը, Կամո Աբրահամյանը, Աշոտ Բարսեղյանը, Գագիկ Դանիելյանը, Առնո Մկրտչյանը, Արծվիկ Պետրոսյանը, Վալերի Սաղյանը և շատ ու շատ քաջորդիներ:

Արցախյան երկրորդ պատերազմում զգալի ներդրում ունեցան աբովյանցիները, որոնք քաջաբար մաքառեցին քառօրյա պատերազմում՝ այդ դժնդակ օրերին քաջաբար ընկավ Նորիկ Գասպարյանը...

Արցախյան երրորդ պատերազմը նոր սերնդի պատերազմ էր, որ ոտքի հանեց հազարավոր երիտասարդների. նրանց հետ, հայրենասիրական եռանդով լեցուն, մարտադաշտ մեկնեցին աբովյանցիները...

Գրքում էպիկական շնչով, հայրենասերի գորովանքով հեղինակը ներկայացնում է բոլոր այն հայորդիներին, որոնք մանկավարժական համալսարանի տարբեր ֆակուլտետներից մեկնեցին ռազմաճակատ, մասնակցեցին մարտական գործողություններին, ոմանք ընկան՝ սուրը ձեռքներին, ոմանք վերադարձան՝սուրը ձեռքներին, ոմանք էլ կորան անհայտության մեջ՝ դառնալով կենդանի նահատակներ...

Երբ կարդում ես մարտիկների համառոտ կենսագրականը և իմանում, որ շատերն ընկել են տակավին երիտասարդ հասակում, երբ նոր-նոր էր բացվում նրանց կյանքի արշալույսը, երբ նրանք, Եղիշեի խոսքերով ասած, դեռ կյանքը չէին ճաշակել, անհուն ցավ ու կարեկցանք ես զգում ընկած երիտասարդ կյանքերի համար:

Երրորդ պատերազմում երեսունյոթ աբովյանցիներ իրենց կյանքը մահով պսակեցին՝ թիկունք չդարձնելով թշնամու դեմ. Վարդանանց քաջերի նման նրանք ևս մահն ընդունեցին սրտի խնդությամբ, միայն թե իրենց քաջությանը վախկոտություն չխառնեցին...

Ադամյան Սուրեն, Ավանեսյան Արմեն, Ավետիսյան Արտյոմ, Բարսեղյան Արտակ, Բեյբության Հովհաննես, Գաբրիելյան Սմբատ, Գրիգորյան Անդրանիկ, Գասպարյան Սամվել, Խաչատրյան Արամ, Կարապետյան Գևորգ, Կիրակոսյան Աժդահակ, Մազմանյան Սմբատ, Մարգարյան Ալեն, Մարգարյան Ռոման, Նալբանդյան Հայկ, Վարոսյան Նարեկ և շատ ու շատ անմահ հոգիներ..

Հայ ժողովուրդը նահատակների համար Մկ. Պեշիկթաշլյանի շուրթերով շշնջում է՝ Վասն հայրենեաց մեռար, դու շա՜տ ապրեցար...

Տիգրան Պետրոսյանցի կազմած հանրագիտարանը թեև ընթերցողի սիրտը լցնում է անսահման վշտի ու անամոք ցավի թանձր մշուշով, այնուհանդերձ նա բացում է նաև մխիթարանքի մի պատուհան, որտեղից տեսնում ենք Արցախյան պատերազմից վերադարձած աբովյանցիներին, որոնք իրենց մարտական դափնիների հետ մեկտեղ բերել են նաև իրենց ընկած մարտական ընկերների սխրանքի դափնիները՝ դրանք մատուցելու ներկա սերնդին՝ որպես կեցության և պայքարի անանց օրինակ:

Ահա նրանք՝ մարտադաշտում հաղթած, բայց պատերազմում պարտված հայորդիները՝ ակադեմիկոս Ազատ Թադևոսյան, Ազգային ժողովի նախկին պատգամավոր Հրայր Կարապետյան, վաշտի հրամանատարի տեղակալ Էդգար Ալեքյան, փոխգնդապետ Հրաչյա Պետրոսյանց, ազատամարտիկ, գեղանկարիչ Արթուր Մարտիրոսյան, վաշտի հրամանատար Աղվան Մխիթարյան, կապիտան Անդրանիկ Մխիթարյան, փոխգնդապետ Աիդա Կարապետյան և Պերճ Գևորգյան, գեներալ-մայորներ Արթուր Փափազյան, Հայկ Միլիտոնյան, կապիտան Խաչատուր Մարգարյան, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Ալիկ Սարգսյան և շատ ու շատ ուրիշներ:

Արցախյան պատերազմում իրենց լուման են ունեցել ռազմական լրագրողները, որոնք մամուլում անկողմնակալ կերպով ներկայացրել են պատերազմի արհավիրքներն ու հայ մարտիկների աննկուն ոգին: Լրագրողների այդ կոհորտան դարձել է մերօրյա պատերազմի վավերագրողների յուրահատուկ բանակը, որ պատերազմին մասնակցել է իբրև ականատես. Սասուն Գրիգորյան, Վրեժ Սարուխանյան, Սուսաննա Հարությունյան, Վրեժ Գաբրիելյան, Անդրանիկ Ոսկանյան, արձակագիր Լևոն Խեչոյան և էլի շատ ու շատ լրագրողներ:

Նրանք, ովքեր վերադարձան Արցախյան երեք պատերազմների փոթորիկներից, լծվեցին հայրենաշեն աշխատանքի կրկնակի եռանդով, որ ընկած նահատակների բացակայությունը ֆիզիկապես չզգացվի, նրանք, ովքեր կուլ գնացին պատերազմների հորձանուտում, դարձան աստղեր և երկնքից են հսկում հայրենի եզերքի անդորրը...

Մանկավարժական համալսարանը չի մոռացել և չի մոռանա իր սաներին, և կենսագրական այս հանրագիտարանը Արցախյան պատերազմի մասնակից աբովյանցիներին է նվիրվում համալսարանի ղեկավարության որոշմամբ:

Եվ ո՛չ միայն:

Արցախյան երրորդ պատերազմում ընկած երեսունչորս նահատակների հիշատակը հավերժացնելու համար համալսարանի՝ Ալեք Մանուկյան-2 մասնաշենքի պուրակում կանգնեցվել է հուշարձան-կոթող (հեղինակ՝ Սեմյոն Բարսեղյան), որի կենտրոնական կերպարը 1602 թվականին Արցախի Ծիծեռնավանքում կերտված խաչքարն է:

Հուշարձան-կոթողի վրա անուն առ անուն անմահացել են նահատակները...

Այդ կոթողը կենդանի վկայությունն է անձնազոհության...

Այդ կոթողը կենդանի օրինակ է ուսանողության համար...

Շնորհակալություն պետք է հայտնել փոխգնդապետ Տիգրան Պետրոսյանցին՝ իր մարտական ընկերների սխրանքն ու փառքը հավերժացնելու համար...

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

ՆԱ ԱՆՀՆԱՐԻՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԷՐ ԴԱՐՁՆՈՒՄ...

«Ոչ մեկի մտքով չէր անցնի, որ նա կզոհվի, որովհետև անհնարինը հնարավոր էր դարձնում, չկար որևէ բան, որ չիմանար, ոչ մեկի չէր լսում. իր ասածն էր անում և հասնում իր նպատակին»,-պատմում է 44-օրյա պատերազմում զոհված Դավիթ Դավիթյանի կինը՝ Տաթև Դավիթյանը:

Դավիթը ծնվել է 1978 թվականին, Աբովյան քաղաքում: Զինվորական ծառայությունից հետո տեղափոխվում է Ռուսաստանի Դաշնություն: Սակայն հայրենիքի կարոտը նրան հանգիստ չէր տալիս:

Հայրենիք վերադառնալով՝ բնակություն է հաստատում Արցախում, որտեղ էլ ծանոթանում է ապագա կնոջ՝ Տաթևի հետ: Ապրում են Թաղավարդում, հետո Շուշիում, իսկ երկու տարի առաջ տեղափոխվում են Երևան: Դավիթն ունի երեք երեխա:

Պատերազմը սկսելուն պես՝ սեպտեմբերի 30-ին, որպես կամավոր մեկնում է առաջնագիծ:

«Դավիթն ասում էր, որ եթե իր նման մյուսներն էլ մտածեն, հաստատ հաղթանակը մերը կլինի»,-պատմում է Տաթևը:

Հոկտեմբերի 13-ին Դավիթը Երևանում էր, եկել էր ջոկատ հավաքելու, սակայն սիրտն անհանգիստ էր, և գործը չավարտած՝ ժամանակից շուտ մեկնեց Արցախ:

Կնոջը զանգելիս ամեն անգամ ասում էր, որ թվաքանակով քիչ են, բայց ավելի մարտական են տրամադրված ու մինչև վերջ մարտնչելու են:

«Ամեն օր զանգում էր, միայն այդ օրը չզանգեց...»,-հուզվում է Տաթևը:

Դավթի մահվան մասին հոկտեմբերի 27-ին նա իմացել է բարեկամներից: «Ինձ չէին ասում, բայց ես հասկացա, որ նա այլևս չկա»,-ասաց կինը:

Դավթի մարտական ընկերները պատմել են, որ երբ զինամթերքը չէր բավականացնում, նա թշնամուց առգրաված զենքերով էր կռվում. «մինչև վերջին փամփուշտը կրակել է, մատը ձգանի վրայից չի վերցրել, անդադար կրակել է՝ զենքերը փոխելով»,- Տաթևին պատմել են Դավթի ընկերները:

Երեխաները դեռ հավատում են հոր հետ հանդիպմանը. «Փոքրը չի հասկանում, անդադար նայում է նկարին ու ասում՝ «գնացել է...», իսկ մեծը գիտի, որ իրենց հայրն այլևս չկա»,- եզրափակում Տաթևը:

Դավիթ Դավիթյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» և «Մարտական ծառայության» մեդալներով:

Մանե ԳԵՎՈՐԳՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

«Հանդիսավոր երդվում եմ՝ անձնվիրաբար ծառայել Հայրենիքիս՝ Հայաստանի Հանրապետությանը»

Այս խոսքերը հազարավոր անգամ հնչել են մեր քաջ նորակոչիկների շուրթերից: Այս խոսքերն արտաբերող յուրաքանչյուր նորակոչիկի մեջ ապրում է հայրենիքի պաշտպանի անվախ ոգին: Ոգի, որը պատրաստ է ենթարկվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, կատարել հրամանատարների հրամանը և, որ ամենակարևորն է, պահել ռազմական գաղտնիքը:

30 տարի առաջ՝ 1992-ի հունվարի 28-ին «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» օրենքն ընդունվեց, որն էլ դարձավ Ազգային բանակի ստեղծման սկիզբը: Հայոց բանակն այսօր 30 տարեկան է:

Արսենյան Նարեկը, որը սովորել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում, պատմում է, որ այնտեղ անցկացրած տարին լի էր դժվարություններով և առավելություններով: Առավելություններից առանձնացնում է խստությունը և կարգապահությունը, հավաստիացնում՝ եթե խստություն լինի, կլինի նաև մնացածը: Բանակային կյանքը ճիշտ ժամանակագրություն է, իսկ ինչու է այդպես՝ պարզաբանում է. «Մենք քիչ ժամանակահատվածում կատարում ենք այնպիսի գործեր, որ սովորական ժամանակներում չէինք անի ու այդտեղից հասկանում ես, որ «չեմ կարողանում» չկա, այլ կա «չեմ ուզում» և մարդն ամեն ինչի ունակ է»:

Դարպասներից այն կողմ մտնելով՝ կյանքդ փոխվում է շատ: Արդեն սկսում ես խորանալ մարտավարական առարկաների, մասնագիտական զենքի, ֆիզիկական պատրաստության և ցանկացած դժվարություններ հաղթահարելու ուղղությամբ: Ես մասնագիտացվեցի հրետանավորի մասնագիտության մեջ, ապա ստացա սպայի կոչում:

«Առավոտյան մարզանք, առանց վերնաշապիկի, մութ, 6 կմ վազք և կապ չունի՝ ինչ եղանակ է, մարմնամարզություն, հետո անկողինների արագ հարդարում, լվացվել, շարվել դեպի ճաշարան, ապա՝ ըստ օրվա կարգացուցակի: Մեր ծառայությունն ինքնին ավելի խիստ էր: Ունեինք մեկ ամիս «կարանտինային» շրջան, դա ավելի խիստ էր: Մեզ հետ կային նաև աղջիկներ: Իրենք էլ մեզ հետ հավասար ծառայում էին»:

Նարեկը հավատացնում է, որ հոգեբանությունը մեծ դեր է խաղում բանակի հարցում. «Բանակը հոգեբանության վրա է, հասարակ շարային քայլելը նույնպես հոգեբանություն է և ազդում է մարդու վրա, օրինակ, զինվորի շարային կեցվածքն ավելի կառավարելի է : Կամ, երբ պետք է միայնակ բարձրանաս բարձունք՝ դա մի բան է, իսկ դասակով՝ այլ բան, որովհետև մենք արդեն միասին ենք աշխատում, մտածում ենք իրար աջակից լինելու մասին»:

Հայոց բանակի շարքերը համալրած պատանին խոսքը եզրափակում է նրանով, որ բանակը նախևառաջ հիմնված է պատասխանատվության վրա:

«Բանակի հիմքում ընկած է պատասխանատվությունը, բանակը պատասխանատու է մեր երկրի անվտանգության համար: Իսկ երբ դու սահմանին ես, ամեն կերպ պատասխանատու ես բոլորի՝ ընտանիքիդ, հայրենիքիդ, սիրածդ մարդկանց հանդեպ, և դա քեզ ավելի է ուժ տալիս: Քո պատասխանատվությունն ավելի բարձր է, անվտանգությունդ՝ ցածր»:

Անահիտ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

Ամեն ինչի հիմքում կրթությունն է

«Ավարայրին չէի հավատում մինչև ինքս չընկա դրա մեջ»,- պատմում է 44-օրյա պատերազմի մասնակից Արման Գուլինյանը:

2019 թվականի հուլիսի 15-ին զորակոչվել է բանակ, ծառայության անցել Երևանի կապի ուսումնական գումարտակում (Քանաքեռ), 6 ամիսը լրանալուց հետո տեղափոխվել է Հադրութ: Կոչումով սերժանտ է եղել, զինվորական մասնագիտությամբ՝ կապավոր: Նա ընդգծեց, որ յուրաքանչյուր զորամաս ունի իր առօրյան ու հետաքրքրությունը և իրեն բախտ է վիճակվել երկու զորամասում էլ տեսնել այդ ամենը: Կանխատեսված էր պատերազմ լինելու մասին: Սեպտեմբերի 24-25-ի գիշերը եղել է մարտական դիրքերում ու հատուկ հետախուզական տեսախցիկի միջոցով դիտարկում արել՝ նկատելով, որ հակառակորդը հրետանի ու տանկեր է առաջ բերում: Սեպտեմբերի 25-ին հրաման են ստացել, պատրաստվել և սկսել նախապատրաստական աշխատանքներ:

«Պատկերացնում էինք կատարվելիքի լրջությունը, բայց չէինք պատկերացնում այդքան ծանր հետևանքները, կորստի ցավն ու տառապանքը»,-ասաց պատերազմի մասնակից զրուցընկերս:

Պատերազմի սկսվելու մասին իմացել են դիմացի սարի վրայի շենքերից մեկի վրա հրետանային հարվածից, հետո իմացել են, որ դա Հադրութի զինկոմիսարիատն է եղել: Եվ միանգամից տագնապ են հնչեցրել:

Հարցին, թե ո՞րն է եղել առաջին քայլն այդ վայրկյանին, Արմանը պատասխանեց. Երբ ես ուսանում էի կապի ուսումնական գումարտակում, մի սպա կար, որն ասում էր՝ տղե՛րք, լավ սովորեք, ձեր մասնագիտական գիտելիքների արդյունքում շատ զինվորների կյանք եք փրկելու… Այս խոսքերը միանգամից եկան մտքիս ու արագ վազել, դասավորել եմ այն, ինչ անհրաժեշտ էր, որ կապի խափանում չունենայինք»,-հիշում է Արմանը:

Հադրութի զորամասում հինգ դասընկերներով են եղել, մի ընկերոջ մասին է տեղեկություն իմացել, իսկ մյուսների հետ կապ չի ունեցել: Բոլորի ծնողներին խաբել է, որ կապ ունի տղաների հետ, բայց դա արել է ծնողների հանգստության համար: Հոկտեմբերի 14-ին իմացել է, որ ամենամոտ ընկերը՝ Լևոնը, զոհվել է օրեր առաջ՝ հոկտեմբերի 10-ին, մի պահ չի հասկացել՝ ինչ է կատարվում իր հետ, բայց սթափվել ու գիտակցել է, որ դիակներ են կորչում, ուստի զանգել է ընկերոջ հարազատներին՝ տեղեկացնելու այդ մասին: Այդ դեպքից 30 րոպե անց ինքն էլ ստացել է ոտքի վիրավորում:

Պատերազմի առաջին օրից մինչև վիրավորվելու պահը եղել է առաջնագծում, եղել է կապավոր ֆելդշեր (բուժակ): Սնունդ է տարել դիրքեր, զինամթերք, զոհեր ու վիրավորներ տեղափոխել: Դեպքեր էլ եղել են, որ զոհվածների ծնողներին լուր է հայտնել:

Վիրավորումը եղել է շտապ օգնության մեքենայի մեջ, երբ դեղեր են փորձել հասցնել առաջնագիծ: Երեք կողմից կրակել են մեքենային, սկզբում չի հասկացել, որ թշնամին է, գլխում միայն ընկերոջ կորստի մասին մտքեր էին, իսկ հետո սթափվել ու տեսել է, որ սաղավարտները փայլում են… այդ ընթացքում էլ վիրավորվել է: Մեքենան ոչ նորմալ վիճակում վարել են 10-15 կմ, իսկ երբ հասել են հրետանու մոտ՝ շարժիչը դադարել է աշխատել: Տեղ հասնելուն պես տղաները սկսել են օգնել, բայց քանի որ այդ պահին բուժակ չկար, Արմանը բացատրել է՝ ինչպես մշակել վերքը: Վիրավորվելու պահին ինքն արձակել է կոշիկի կապիչները, ոտքը ամուր կապել ազդրից, որպեսզի դադարեցնի արյունահոսությունը: Բոլորը համախմբված օգնել են իրար:

Արմանը հիշում է, որ այդ օրերին հումորն ու կատակն օգնում էին իրենց ապրել, վանել ներսի տագնապն ու մյուս զգացողությունները, ամեն ինչ հիշում է, ոչինչ չի մոռացել…Ցավը մեծ է, կորուստներն՝ անդառնալի, բայց պետք է ապրել, առաջ նայել…

Նա նշեց, որ պատերազմի օրերին շուրջ 60-70 կամավորներ են գալիս առաջնագիծ ու հանկարծ նրանց մեջ տեսնում է մի մանկադեմ տղայի, հետո իմանում է, որ տղան 18 տարեկան է: Ժպիտով պատմում է, որ զարմացել է ու մտածել. «Սա է իրական հայը, այ հայրենասիրությունը սա է»:

Իսկ կամավորներին զգուշացրել էր, եթե վախենում են, թող հրացաններում պատրոնները լիցքավորեն և տան կռվողներին կամ էլ բրդուճներ անեն. այդ օրերին շատ մեծ դեր ուներ այդ գործողությունը, բայց հետո նրա խոսքերը լսելով սկսել են հրացան վերցնել և կռվել:

«Երբ գնացի «սնարյադ» բերելու, զինվորներիցս մեկը եկավ ու հարցրեց՝ կարո՞ղ եմ ասել, թե ինչու եկավ: Մի պահ լռեցի, ու նա պատասխանեց. «Քեզ հետ ապահով է, դրա համար»,- այսպես է հիշում իր ծառայությունն Արման Գուլինյանը:

Շարունակելով խոսքը՝ նա հավելեց, որ երբեք չի մտածել, որ պատերազմն այդքան երկար կձգվի: Բոլորը կարծել են, թե Ապրիլյան պատերազմի նման կարճ կլինի, բայց…

Փաստաթղթի ստորագրման մասին գիտակցել է, բայց որ հողեր կհանձնվեն, դրա մասին չի մտածել: Ոչինչ չէր հիասթափեցրել նրան մինչև այն վայրկյանը, երբ իմացել է փաստաթղթի ստորագրումից հետո խորհրդարան մտած մարդկանց մասին:

«Հիասթափությունս մեծ էր. երբ պետք է սահման պահեին՝ չկար այդպիսի մեծ քանակությամբ մարդ, իսկ մի օրում ինչքան մարդ հավաքվեց այդտեղ»,-ասաց նա:

Միշտ մտածել է, որ պետք է ապրեցնի ընկերներին ու շարունակի իրականացնել նրանց երազանքները, որոնը՝ ինչպես կարողանա: Նրա ցանկությունը հայ ազգի միջից դավաճանությունը վերացնելն է, նաև միշտ պնդել, որ մարդիկ լավ սովորեն, կապ չունի՝ աղջիկ թե տղա: Ըստ նրա, ամեն մեկը եթե յուրաքանչյուրը լավ տիրապետի իր մասնագիտությանը և իր գործը լավ անի՝ երկիրը կծաղկի, իսկ գիտությանը նվիրվելու դեպքում ամեն ինչ կստեղծվի՝ թե՛ դրոն, թե՛ ժամանակակից զենք, հմուտ դիվանագիտությունն ու պատմության իմացությունն էլ կլրացնեն վերոհիշյալին:

«Եթե դու ունես լավ կրթություն, լավ տիրապետում ես քո մասնագիտությանը, երբեք չի կարող թուրքը սահման խախտել ու անցնել, եթե դու լավ դիվանագետ լինես՝ չի լինի հրադադարի խախտում»,-ընդգծեց Արմանը:

«Հայրենիքը շատ մեծ կարիք ունի նվիրյալ ու կրթված մասնագետների, ցանկությունս այն է, որ մերօրյա հայ սերունդը լինի կրթված, որովհետև ամեն ինչի հիմքում ընկած է կրթությունը, ամեն ինչ սկսվում և ավարտվում է կրթությամբ»,-իրավացիորեն իր խոսքը եզրափակեց պատերազմի մասնակից Արման Գուլինյանը:

Վիոլ ՈՍԿԱՆՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

Ցավով տեղեկացնում ենք, որ մահացել է Մանկավարժական համալսարանի Տնտեսագիտության ամբիոնի և հայ տնտեսագիտության զարգացման գործի երախտավորներից մեկը՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Տիգրանի Սարգսյանը: Շրջանցելով մահազդի ընդունված ձևը՝ որոշեցինք նրա հոբելյաններից մեկի առիթով տպագրված նյութը ներկայացնել՝ կատարելով նրա վերջին ցանկությունը:

ՉԿՈՐՍՎԱԾ ՏԱՐԻՆԵՐ

Չգիտեմ էլ ո՞վ, բայց գրի ու գիտության մարդը հանգիստ է անցնում իր տարիների շարքով: Եթե դրանք նույնիսկ մոտենում են «կարմիր գծին», ապա նրա մեջ խուճապ չի նկատվում: Եվ սա մի տեսակ մասնագիտական «արատ» է: Ի սկզբանե նվիրվելով գիտամանկավարժական գործին՝ մտավորականներից յուրաքանչյուրն ընդունում է իրեն հատուկ կենսակերպ, որի սկիզբն ու վերջը այնքան էլ չեն տարբերվում իրարից:

Խոսքը տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Սարգսյանի մասին է, որի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակը լրացավ վերջերս:

Ծնվել է 1936 թ., Արցախում (Ստեփանակերտին մերձակա Բալուջա պատմական Մեղրատափ գյուղում), ծառայողի ընտանիքում. Սովորում է հայրենի գյուղի միջբնակարգ դպրոցում: 1953 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետ: 1958 թ. ավարտելով համալսարանը՝ վերադառնում է Արցախ, որտեղ մի քանի տարի աշխատելուց հետո, 1962 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի առկա ասպիրանտուրա «Քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ: 1967 թ. պաշտպանում է թեկնածուական, իսկ 1986 թ.՝ դոկտորական ատենախոսություն, ստանում է դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումները:

Մ. Սարգսյանն էական ավանդ ունի հայ տնտեսագիտության զարգացման գործում: Նրա գրչին են պատկանում գիտական մի քանի տասնյակ աշխատություններ (այդ թվում՝ յոթ մենագրություն)՝ նվիրված սեփականության պահանջմունքների և կենսակերպի հիմնահարցերին (աշխատությունները հրապարակվել են ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն): Մ. Սարգսյանը չի շրջանցել նաև թարգմանչական աշխատանքը: Նկատի ունենալով մայրենի լեզվով ուսումնամեթոդական գրականության խիստ անհրաժեշտությունը՝ նա ձեռնամուխ է լինում Գ. Կոզլովի խմբագրությամբ ռուսերեն հրատարակված «Քաղաքատնտեսություն» ծավալուն դասագրքի թարգմանությանը, որը հայերեն լույս տեսավ 1973թ.:

Իր գիտական մտահղացումները հասարակության առավել լայն շրջանին փոխանցելու ակնկալությամբ պրոֆեսոր Մ. Սարգսյանը վերջին տասնամյակներին պարբերաբար հանդես է գալիս հանրապետական մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Ավելի քան ընդգրկուն է Մ. Սարգսյանի մանկավարժական գործունեությունը: Այն սկսվում է 1963 թվականից: Շուրջ մեկ տասնամյակ Երևանի պետական համասարանում, այնուհետև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (որտեղ 2002-2014թթ. ղեկավարել է տնտեսագիտության ամբիոնը) ուսուցանում է տնտեսագիտական գիտելիքներ, համատեղության կարգով գիտնականը աշխատանքի է հրավիրվել նաև հանրապետության այլ բուհեր: Բնականաբար, Մ. Սարգսյանի ուշադրությունից չէր կարող դուրս մնալ Արցախի պետական համալսարանը, որի բացմանը մասնակցելով՝ նա արդեն իսկ հաջորդ օրը դասախոսական կազմի և ուսանողության առջև հանդես եկավ սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների մասին դասախոսությամբ, իսկ հետագայում կարդաց ամբողջական դասընթաց: Այս՝ գրեթե 55-ամյա մանկավարժական գործունեության ծնունդն է երիտասարդ և միջին սերնդի բարձրագույն որակավորման մասնագետների ստվար բանակը, որն այսօր իր գործուն մասնակցությունն է բերում կրթության, գիտության, կառավարման և տնտեսության ամենատարբեր բնագավառներում:

Հարկ է նշել, որ բարձրագույն կրթության մասնագետների պատրաստման գործունեությամբ, Մ. Սարգսյանը դուրս է եկել զուտ պաշտոնավարության շրջանակներից, տասնյակ տարիներ նա պետական քննական հաձնաժողովների նախագահ է եղել մի շարք բուհերում՝ տնտեսագիտական մասնագիտությունների գծով: Այս առումով նրա գործունեությունն ընդգրկում է նաև բարձրագույն որակավորման գիտական կադրերի պատրաստման բնագավառը: Տարբեր տարիների պրոֆ. Մ. Սարգսյանն անդամակցել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի և Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի մասնագիտական խորհուրդներին, նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մի շարք ասպիրանտներ: Գիտնականը բազմիցս հանդես է եկել որպես թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս, իսկ նրա ղեկավարած ամբիոնը՝ որպես առաջատար կազմակերպություն: Բարձրագույն որակավորման կադրերի պատրաստման տեսակետից հատկապես արգասաբեր էր Մ. Սարգսյանի 16-ամյա փորձագիտական գործունեությունը ՀՀ ԲՈՀ-ում:

Մաքսիմ Սարգսյանը եռանդուն հասարակական գործիչ է, ինչը առավել տեսանելի էր հատկապես վերջին տասնամյակներում, երբ հրատապ դարձան հայրենի եզերքի սոցիալ-քաղաքական հիմնահարցերը: Արցախյան շարժման սկզբից 1980-ականների 2-րդ կեսից, լինելով մասնագիտական հարցերով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամ, հայ պատգամավորների խորհրդական, Մ. Սարգսյանը նրանց նյութեր էր տրամադրում նաև Արցախի իրադրության մասին: Այս տեսակետից հատկապես ուշագրավ է Լեռնային Ղարաբաղի վիճվարչության տվյալների հիման վրա նրա կազմած վերլուծական ընդարձակ «Տեղեկանքը» Արցախի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, որն օգտագործվեց հայ պատգամավորներին մի շարք ելույթներում և ամբողջությամբ ներկայացվեց Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը: Իսկ երբ սկսվեց պատերազմը, Արցախին արդեն գործնական ու համակողմանի օգնություն էր անհրաժեշտ: Այդ նպատակով 1990 թ. սկզբին Մ. Սարգսյանը Երևանում հիմնադրում է «Մեղրագետ» հայրենակցական միությունը, որը նրա ղեկավարությամբ նախկին ԽՍՀՄ-ի տարբեր վայրերում ապրող մարդկանց, Հայաստանի քաղաքացիների, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների միջոցներով Արցախյան պատերազմի ամբողջ ընթացքում համակարգված նյութական օգնություն է ցույց տվել ճակատին (կամավորական շարժմանը զենք, զինամթերք, ֆինանսական միջոցներ), զոհվածների, բազմանդամ ու կարիքավոր ընտանիքներին, վիրավորներին և էլի շատերին: Միության տեղում հետաքրքրվում էր հայրենակիցների հոգսերով, կատարում պարենի և վառելիքի մատակարարումներ, ինչպես նաև սոցիալական որոշ օբյեկտների շինարարություն (ի դեպ, պատերազմից հետո էլ ընդհուպ մինչև այսօր Մ. Սարգսյանը բարեգործական աշխատանք է կատարում Արցախում, նաև Երևանում): Պատերազմի տարներին նա հաճախ էր լինում ճակատային գծում, իր հայրենասիրական զրույցներով և ելույթներով ոգեշնչում զինվորներին, իսկ վերադարձին մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ հանդես գալիս ճակատի և թիկունքի մարդկանց սխրանքները պատկերող հոդվածներով և հաղորդումներով:

Մ. Սարգսյանը ՀՀ-ի ազատամարտի վետերանների միության և նրա քաղաքական խորհրդի անդամ է: Նրա բազմաբնույթ գործունեությունը անուշադրության չի մատնվել. Պարգևատրվել է 8 մեդալով (որից չորսը՝ մարտական) և բազմաթիվ պատվոգրերով: Հարազատ բուհում երախտագիտությամբ կերտվել է նրա դիմաքանդակը (քանդակագործ՝ Միսաք Մելքոնյան)՝ արվեստի ուշագրավ գործ:

Այո, ապրում է մարդն իր տարաբնույթ գործերով՝ մտքով անգամ չանցկացնելով չապրելու տարբերակը, Աստծո մտադրությանն անտեղյակ: Մի առիթով ասաց, թե ճիշտ ապրելու դեպքում ամեն տարիք ունի իր հետաքրքրությունն ու խորհուրդը, և դա, հատկապես, կրթության և գիտության մարդու համար, որն ամբողջ կյանքում պատրաստվում է ապրելու: Նման մարդկանց դժվար է ամփոփվել ութսուն տարիների մեջ: Եվ եթե Աստված խանդոտ չէ, ու ինքն էլ ունի Աստված, չի շտապի մտածել ավարտի մասին, մինչև որ մարդը ի մի կբերի ասելիքն ու անելիքը, կտա ամեն ինչ՝ ոչինչ չտանելով իր հետ: Երևի դրա համար էլ կատակով ավելացնում էր նաև. «իսկ եթե Աստծուն մեղմորեն համոզենք, թե մինչև հիմա ինչ արել արել ես, այսուհետ երկինքը՞ քեզ, երկիրը՞ մեզ»:

Հուսանք, որ այդպես էլ կլինի:

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱ ակադեմիկոս «Լրաբեր» Երևան, 2016

ԵԶԱԿԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«2022 թվականին լրանում է Մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակը. բուհի նախատեսած միջոցառումների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում նաև թանգարանային գործունեությունը: Դեռևս 1921 թվականին, երբ հիմնադրվեց Հայաստանի կենտրոնական մանկավարժական թանգարանը, կարևորվեց թանգարանային գործը. թանգարանը դիտվեց որպես կրթալուսավորչական և մշակութային օջախ: Անկախ թանգարանի տիպից, գործունեությունից, փոխներգործման եղանակներից այդ գործառույթներն արդիական են նաև մեր օրերում»,- ՀՊՄՀ-ում «Հայաստանի կենտրոնական մանկավարժական թանգարան»-ի 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառման և ցուցահանդեսի բացման ժամանակ նշեց բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանը:

Ձեռնարկին ներկա էին թանգարանի հիմնադիր տնօրեն Անտոն Անտոնյանի ընտանիքի անդամները, ոլորտի ներկայացուցիչներ, հյուրեր, ուսանողներ:

Անդրադառնալով այդ ժամանակաշրջանի պատմամշակութային գործունությանը՝ պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը նկատեց, որ թանգարանի հիմնումն իր շուրջ էր համախմբել տարբեր տարիքի և մասնագիտությունների տեր մարդկանց, իսկ նոր մանկավարժական թանգարան հիմնելու գործին ձեռնամուխ եղավ Անտոն Անտոնյանը:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը պատահական չհամարեց, որ Երևանում ծնված, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սովորած, մի քանի տարի գյուղում դասավանդած, ապա նաև Սանկտ Պետերբուրգի Հոգեբնյարդաբանական ինստիտուտի Կենսաբանության ֆակուլտետն ավարտած Անտոն Անտոնյանը, որ հետո աշխատեց նաև որպես փոխխյուպատոս և Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստացավ սպայի կոչում, պետք է ստանձներ թանգարան ստեղծելու առաքելությունը:

Պատերազմից վերադառնալով՝ Անտոն Անտոնյանը ծրագրում է դպրոցական կրթությունն ամրապնդելու համար ստեղծել մանկավարժական թանգարան, ուր կենտրոնացած կլինեին քաղաքում պահպանված լաբորատոր իրեր՝ կապված ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և այլ առարկաների հետ:

Խորհրդային իշխանությունների կողմից 1921 թվականի դեկտեմբերի 18-ին «Հայաստանի Կենտրոնական մանկավարժական թանգարանի» հիմնումը, նույն իշխանությունների փակած էջմիածնի Մանկավարժական թանգարանի ավանդույթների շարունակությունն էր՝ գաղափարական նոր հենքով:

ՀՊՄՀ թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը նկատեց, որ մանկավարժական թանգարանը հաճախ են շփոթում մանկավարժության պատմության թանգարանի հետ. Այնինչ, սա կրթական թանգարանի մի առանձնահատուկ տեսակ էր, որի առջև հրատապ խնդիր էր դրված՝ դպրոցի աշխատողներին հնարավորություն տալ հավաքված և ստեղծված ցուցանմուշներով իրենց գիտելիքները հարստացնել հատկապես բնական գիտությունների ասպարեզում.«Ծրագրի երկրորդ կետի համաձայն՝ մանկավարժական թանգարանը քաղաքների և գյուղերի դպրոցներին պետք է օժանդակեր իր ստեղծած ցուցանմուշներով: Այդ տարիներին թանգարանի հիմնումը հայրենանվեր գործ էր, իսկ լուսավորության, բարության սերմը ցանելն այս ընտանիքի գենի մեջ է: Ապացույցը՝ բուհի թանգարանի սրահներից մեկում նրանցից շատերի «ներկայությունն է»»,-նշեց թանգարանի տնօրենը:

ՀՊՄՀ թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյանը պատմական ակնարկ կատարեց Հայաստանում թանգարանների ստեղծման մասին:

«Ինչո՞ւ Հայաստանում առաջինը ստեղծվեց մանկավարժական թանգարան» հռետորական հարցին արխիվագետը պատասխանում է՝ մանկավարժական կրթությունը եղել է հայ ծնողի երազանքը՝ գյուղացի տանուտերից մինչև քաղաքի բնակիչ: Ամատունի Վիրաբյանը հավելեց նաև, որ Ռուսաստանի տարածքում աղջիկների համար նախատեսված դպրոցներ հիմնողները ևս հայեր են եղել, իսկ մանկավարժական թանգարանի հիմնադրման համար արդեն իսկ պարարտ հող կար:

«Հայաստանի կենտրոնական մանկավարժական թանգարան»-ի 100-ամյա հոբելյանին նվիրված ձեռնարկին Անտոն Անտոնյանի թոռը՝ Արամ Գրիգորյանը, պապի հիշատակը վերականգնելու և հավերժացնելու համար շնորհակալություն հայտնեց բուհի ղեկավարությանն ու թանգարանի տնօրենին:

Վերջինս ներկայացրեց Անտոն Անտոնյանի կենսագրությունը և չթաքցրեց՝ պապի լուսանկարին նայելիս հպարտության և արդարության վերականգնման զգացողություն ունի:

1938 թվականին Անտոն Անտոնյանը ևս դարձել էր ստալինյան բռնաճնշումների զոհ և միայն տարիներ անց՝ 1996 թվականին, Արամ Գրիգորյանը ստացել է պապի արդարացման վկայագիրը, ըստ որի՝ նրան գնդակահարել են անհիմն մեղադրանքով. «Թուղթը դրեցի տատիս գերեզմանին. երջանիկ եմ, որ հազվագյուտ մասունքները, որ պահպանվել են նրանից, այսօր ներկայացված են ցուցադրությանը»,-հավելեց բանախոսն ու ընդգծեց՝ բովանդակալից, շնորհակալ և ողբերգական կյանք ունեցավ Անտոն Անոտնյանը:

Մեծ հայորդու անձնական մի շարք իրերի, կենսագրական տվյալների և լուսանկարների ՀՊՄՀ թանգարանի այցելուները հնարավորություն կունենան ծանոթանալ մինչև հունվարի 24-ը:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 25.01.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ